

սրտի, թագընկալութեամբ յեկեղեցւոջ նորին 'ի Տարսուն, եւ դեսպան առաքելով 'ի դուռն կայսեր արեւելից, որպէս ցուցցէ կարգ պատմութեանս:

Ոչ ինչ պակաս եւ Ներսէս ծանեալ զԼեւոն, որպէս էրն, վեհագոյն քան զհասարակ չափ իշխանաց ազգին՝ մերձ եւ հեռի ժամանակաց. եւ թէպէտ ազատ եւ անահ 'ի նմանէ, եւ սրբազան կարգաւն, եւ տէրութեամբ Լամբրունի եւ համբաւովն, այլ ոչ յաչաղէր արժանաւորին զարժանն մատուցանել շուք եւ մեծարանս, առատ եւ ջերմ սրտիւ. եւ յառաջ իսկ քան զժամանակս դիպացս այսոցիկ, 'ի յիշատակարանս գրոց իւրոց պանծանօք իմն կոչէ միշտ զնա՝ *Բշխողս մեր*, կամ «*Պարոն մեր* Լեւոն, որ 'ի սոյն ժամանակս (1190) էր իշխող Կիլիկիոյ եւ Սարիոյ եւ լերանց սոցին». եւ 'ի թղթիս յայսմիկ (գրելոյ յամի 1194) մինչ չեւ էր թերեւս Լեւոնի ծանուցեալ թագաւոր յայլոց, այնպէս կոչէ զնա. «Դու *թագաւոր մեր*», եւ մաղթէ հաւասարել զաթոռ նորա Կոստանդեանց եւ Թէոդոսեանց նոյնպէս եւ յետ երկեմենի (1196), զի ընդարձակեաց զտէրութիւն Հայոց՝ «Թագաւորի Լեւոնի ձեռն, որ 'ի Կիլիկեայս եւ *Ասորոց զաւառացն* տիրէ... 'ի փառս Քրիստոսի եւ 'ի զօրութիւն քրիստոնէից». եւ պերճագոյն եւս 'ի հուսկ ամի կենացն, իբրու կտակ իմն ամենարժեայ թողլով նմա զբանքս. «Թագաւոր Հայոց Լեւոն, որ յ'Ռոբինեանց, բարեպաշտ եւ յաղթող Աստուծով. որոյ հոչակ արութեանն շարժեաց զմեծ ինքնակալն հին Հռոմայ՝ զՀեռի, եւ Նոր Հռոմայ՝ զԱլեքս, որք պսակեցին սա քարամբք պատուականաւ. զսա՝ Քրիստոս Աստուած մեր շնորհեսցէ մեզ երկայնութեամբ աւուրց եւ անվանելի յաղթութեամբ. եւ 'ի փոխիլն աստի՝ սրբոց թագաւորացն արասցէ պսակակից եւ խորանակից, 'ի լուսեղէն խորանս»:

Զօրութեամբ եւ զգօնութեամբ՝ Լեւոն ոչ միայն 'ի վերայ բնիկ եւ տոհմային եկեղեցւոյն եւ եկեղեցականաց թելարկու լինէր, այլ եւ այլոց արեւելեայց՝ 'ի կարեւոր պէտս նոցին. որպէս երբեմն Ասորոց ընտրեալ իւրեանց պատրիարք՝ ոչ համօրէն հաւանութեամբ՝ զՄիքայէլ Կրսեր, ընտրեցին եւ այլ աւագ եպիսկոպոսունք՝ զգիտնականն Յովհաննէս-Յեսու՝ Կարճիկ մականուանեալ, յամի 1208. որ առ ապահովութեան եկն 'ի Կիլիկիա եւ եկաց 'ի Պաքսիմատի վանս, տարեւոր ժամանակ. մինչեւ միաբանք մեծի վանացն Գալիկաթայ՝ որ 'ի Սիս, աղաչեցին զԼեւոն, եւ ետ սա